

Բարև բոլորին,ես Արմինե Այվազյանն եմ Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղից: Ես ուսանողուհի եմ,18 տարեկան եմ:Արցախի պետական համալսարանում ուսումնասիրում եմ հայոց լեզու և գրականություն ու երագում եմ դառնալ լավ մասնագետ:Ես շատ եմ սիրում Մարտակերտը և իմ գյուղը:Մինչև 1992 թվականի շրջանի գրավումը և պարտադրված արտագաղթը Մարտակերտը 3-րդ մեծ քաղաքն էր տարածաշրջանում:1988թ. և 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո մարդիկ մի կերպ վերականգնեցին իրենց առօրյան:Նրանք զբաղվում էին գյուղատնտեսությամբ,անասնապահությամբ:

Մարտակերտը հայտնի է իր պատմական հուշարձաններով:Այստեղ է գտնվում Գանձասար վանքը(13-րդ դար),Երեք Մանկունք եկեղեցին(17-րդ դար),Յոռեկա վանք(13-րդ դար), Ջավապտուկ վանք(13-րդ դար) և այլ պատմական հուշարձաններ:

Իմ հայրենի գյուղ Կուսապատը չնաշխարհիկ մի վայր է,այստեղ բնությունը տարբերվող է:Թեկուզ գյուղը շատ չէ բնակեցված,բայց մարդիկ բաց են և անմիջական:Այստեղ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և այգեգործությամբ:Գյուղը ունի դպրոց(որը կառուցվել է 1878 թվականին),մանկապարտեզ,ակումբ,բուժկետ:Գյուղում կա նաև Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:

Գյուղը այսօր մեր վերահսկողության տակ է,և մենք հույս ունենք,որ կվերադարձնենք մեր շրջաններն ու գյուղերը,որոնք 2020 թվականի նոյեմբերից գտնվում են ադրբեջանցիների վերահսկողության տակ:

Սեպտեմբերի 27-ը իմ կյանքի ամենավատ օրն էր:Տագնապի ձայներն ու սարսափը տիրում էին ամենուր:Չայրս,եղբայրս և հորեղբայրս մեկնեցին առաջնագիծ հենց առաջին օրվանից:Մենք գյուղում մնացինք 3 օր `պայթյունների ու վախի ներքո:Դժվար էր պառկել ու քնել,երբ մտածում էինք,որ հաջորդ վայրկյանին կարող էր լինել էլ ավելի սարսափելին:

Մենք բոլորս զգացել ենք պատերազմի ցավը,հոգեպես մահացել ենք ամեն մի զինվորի ընտանիքի հետ,որը կորցնում էր որդի,ամուսին բարեկամներ:Ահավոր էր կարդալ այն մարդկանց անունները,որոնց ճանաչում էինք զոհվածների կամ անհայտ կորածների ցուցակում:

Երբեք չեմ ցանկանա,որ մեզանից հետո եկած սերունդը ճանաչի պատերազմ և կորուստներ:

Երբեք...

Արմինե 18 տ.